ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շաղ Տիրան Թեքեյան 2/1
էլ փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6 47 22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» փետրվարի 2019 թվականի N 5

ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Մուսալեռ համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 6-ի հերթական նիստի N 13 որոշումը՝ որոշում եմ.

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում 04-069-103-028 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասում կառուցված 103-028-001 ծածկագրով արտադրական նշանակության շինությանը տալ հետևյալ հասցեն՝ Լուի Դարթիժ դյու Ֆուրնեի փողոց, թիվ 77/1:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, փետրվարի 25
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շաոլ Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6 47 22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«7» փետրվարի 2019 թվականի N 4

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետով՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 3.1-1/ թափուր պաշտոն զբաղեցնելու համար նշանակել և անցկացնել մրցույթ՝ 2019 թվականի մարտի 12-ին:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի /ծածկագիր՝ 3.2-1/ թափուր պաշտոն զբաղեցնելու համար նշանակել և անցկացնել մրցույթ՝ 2019 թվականի մարտի 12-ին:
3. Աշխատակազմի քարտուղարին /Գոհար Սայադյան/ սահմանված կարգով նախապատրաստել համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների հայտարարության տեքստը:
4. Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների աշխատանքների կազմակերպման համար լիազորված անձ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Սայադյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, փետրվարի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6 47 22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«8» փետրվարի 2019 թվականի N 8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 30-րդ հոդվածով և հիմք ընդունելով Սիմա Հակոբյանի 05.02.2019թ. դիմումը՝ կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակել Սիմա Փանոսի Հակոբյանին՝ 2019 թվականի փետրվարի 14-ից՝ նրա հետ կնքելով անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիր:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետին (Լուսինե Ալեքսանյանին) աշխատավարձի վճարումը իրականացնել համաձայն սահմանված դրույքաչափի:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, փետրվարի 8
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շաղ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6 47 22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«01» փետրվարի 2019 թվականի N 7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 30 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի 30.01.2019թ. N6 որոշումը՝ որոշում եմ.

1. Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի « «Մովսես Տեր-Գալուստնայի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակազմին հարկադիր պարապուրդում համարելու մասին» N 30 կարգադրության 1-ին կետում «փետրվարի 1-ը» թիվը փոխարինել «փետրվարի 28-ը» բառերով:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, փետրվարի 1
գ. Մուսալեռ